



2002
աշուն

Ահա եկա, իմ վարժարա՛ն,
Գիրկդ բացել շտապի՛ր,
Բարև, դպրո՛ց, իմ դասարա՛ն,
Հոգիս լույսով ողորի՛ր:

Բ
Ս
Բ
Ի
Ե
Ր
Թ

Այս համարը նվիրվում է
առաջին դասարանցիներին

Վարուժան

Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանի և Օհանյանի
«Ավան կրթահամալիրի» հանդես
Հրատարակվում է 2001թ. ապրիլից (N4)

Բարև, արեգակ:
Քո շողերի ուղեկցությամբ այսօր դպրոց եկանք,
որ դեռ երազ էր թվում...

Պողոսյան Քրիստինա,
Միրզաբեկյան Գևորգ,
Բաբայան Հայկ,
Վանեսյան Արեգ,

Բարև, իմ վարժարան, գիրկդ առ ինձ ու մուկորեցրո՛ւ
քո գունեղ ու հեքիաթային աշխարհում....

Մուրադյան Վահան, Մանուկյան Տաթևիկ,
Սահակյան Գևորգ, Անդրեասյան Էդգար,
Ավագյան Արմեն, Օհանջանյան Վահե,

Մենք «Ավան» կրթահամալիրի սաներն ենք և կտվորենք այնպես
որ կրթության այս արգասաբեր ճանապարհին
բազմապատկենք ճառագող փարոսների թիվը...

Գասպարյան Լիլիթ, Բաբաջանյան Վահան, Արոյան Լիլի, Թոսունյան Անուշ,
Երեմյան Գեղամ, Շամխալյան Սասուն, Շամխալյան Արման,

Այս երկնքի տակ ամեն ինչ գույն ու ձև ունի,
կերպ ու բովանդակություն:

Չանդիրյան Արթուր, Էզնատոսյան Կառլեն,
Քալանթարյան Հարություն,
Մուրադյան Իրինա,
Սևոյան Հայկ,

Մեր ուսուցիչների օգնությամբ մեր հոգիներում մենք պետք է
կառուցենք նոր աշխարհ՝ գունեղ ու հեքիաթային,
բազմիմաստ ու բովանդակալից...

Պետք է նկատենք... Մեր մանուկ ձեռքերով պետք է ընթացք տանք մեր մանուկ երևակայությանը...

Զաբարյան Մարգարիտա,
Մարտիրոսյան Գայանե,
Աղամյան Սուրեն,
Սարգսյան Օվսաննա,

Իսկ պարել... Ուզում եք պարել սովորել...
«Մխիթար Գոշ» կրթահամալիրում գործում է նաև
«ԷՍ ԶԻ» պարային համույթը...

Բախշիյան Ելենա,
Դանիելյան Արսեն,
Պետրոսյան Սուրեն...
Սմբատյան Արամ

ՓՈՔՐԻՎ, ԴՈՒ ԵԿԵԼ ԵՍ ՀԱՎԱՏՈՎ...

Ի՞նչ սիրելի առաջին դասարանցիներ՝ Գեորգ ու Արեգ, Անուշ ու Տարև, Հայկ ու...

Չեզ սիրով ընդունում ենք մեր հեքիաթների, խաղերի, կրթության ու դաստիարակության ԱՇԽԱՐՀԸ, որտեղ դու քեզ կզգաս ինչպես Չեր տանը, ընտանիքում: Այս ԱՇԽԱՐՀԸՆԻՄ էլ շատ է բարությունը, ինչպես Չեր ընտանիքում: Ընդհատմամբ կլինի այնքան ուշադրություն, որքան Չեր տանը: Այս ԱՇԽԱՐՀԸՆԻՄ կարգապահություն է տիրում, որովհետև դու տարբեր ընտանիքներում տարբեր ձևով դաստիարակված բալիկներ եք, իսկ մեր ԱՇԽԱՐՀԸՆԻՄ դուք բոլորդ պետք է ընտելանաք մեր կարգերին ու պահանջներին, որոնք պետք է հավասար լինեն բոլորիդ համար: Դրանք բարդ կամ դժվար չեն, միայն պետք է լինեք կարգապահ, սովորեք շատ լավ, հարգալից վերաբերվեք միմյանց, նորամտոր գիտելիքներով ուրախացե՛ք Չեր պապիկներին ու տատիկներին, հայրիկներին ու մայրիկներին: Սիրելի փոքրիկ, մեր ԱՇԽԱՐՀԸՆԻՄ դու ոչ միայն ինքդ գիտելիքներ ձեռք կրերես քո հետագա կյանքը ճիշտ կատարելու համար, մեր հայրենիքի համար օգտակար մասնագետ դասնալու, այլև քո գիտելիքներով կզարմացնես քո ծնողներին: Հետևաբար առիթը բաց մի բողբե դարձե՛ք Չեր ծնողների համար ուսուցիչ, տուն տարեք շատ ու հետաքրքիր գիտելիքներ:

Մեր ԱՇԽԱՐՀԸՆԻՄ ամենազվախվոր օրերն են այն է, որ *մենք մեր պարտականությունները պետք է բարեխղճորեն և որակով կատարենք, իսկ դուք ցուցաբերեք բարձր աշխատասիրություն ու առաջադիմություն*: Կարևոր չէ, որ Արամ անվան կողքին ավելանա Խաչատրյան ազգանունը, որպեսզի դուք դառնաք մեծություն, կարևոր է, որ բոլորդ Չեր ընտրած քննադատում դառնաք այնպիսի մեծություններ, ինչպիսիք էին Արամ Խաչատրյանը, Վիկտոր Համբարձումյանը, Գարուշ Սևակը, Տիգրան Պետրոսյանը... Անհրաժեշտ է, որ ՄԵՐ ԱԶԳԸ ԱՇԽԱՐՀԸՆԻՄ ՆԵՐԿԱՅԱՆԱՆ ՆՄԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ...

Մենք պատրաստ ենք մեր խոստումները կատարելու, դու նույնպես պետք է համապատասխան պատրաստակամությամբ ցուցաբերես քո պարտականությունների մեջ: Այդ զվախվոր պայմանը կատարելու դեպքում մեր ԱՇԽԱՐՀԸՆԻՄ քեզ համար կդառնա հեքիաթների ԱՇԽԱՐՀԸՆԻՄ և դու շատ սիրով ու շտապելով ամեն առավոտ ժպտերես կծոնես այդ ԱՇԽԱՐՀԸՆԻՄ տուն կվերադառնաս գիտելիքներով հարստացած՝ նոր սովորած հեքիաթի, մեր հերոսին նմանվելու պատրաստակամությամբ...

Ընդհակառակը մեր ծնողներին՝ մեր կրթահամալիրի հիմնադիրների, այստեղ աշխատող մանկավարժների ու սպասարկող կազմի նկատմամբ *ի ա վ ա տ ու նենադու* համար: Հավատը մեր օրերում շատ բանկ արժեք ունի և համապատասխան հատուցում է պահանջում:

Նախորդ բոլոր տարիների փորձը հուսադրող է:

Սիրելի առաջին դասարանցիներ, շնորհավորում ենք Չեզ ընդամենը ինչ տարվա ընթացքում հանրապետությունում ճանաչում գտած և բարի համբավ վայելող «Ավան կրթահամալիրի» սանը դառնալու համար:

Չ ե զ ր ա ր ի ե ր ք...

«Ավան կրթահամալիրի» հիմնադիրների խորհրդի նախագահ, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մուրեն Օհանյան

Սովորեք գերազանց

Սիրելի առաջին դասարանցիներ,

Ընդհավորելով Չեր առաջին ուսումնական տարին՝ ցանկանում ենք, որ դուք գերազանց սովորեք և դառնաք ազգի պարծանքն ու ծնողների հպարտությունը: Ընդունում ենք նաև ողջունի խոսք անել Չեր ծնողներին, որոնք ճիշտ բալլ են կատարել ընտրելով «Մխիթար Գոչ» վարժարան-կրթահամալիրը: Կրթությունը Չեր առաջին քայլն է դեպի հասուն կյանք, և անչափ կարևոր է, որ Չեզ շրջապատող բանիմաց մասնագետների յուրաքանչյուր բաղը ընդունեք որպես պատգամ:

Գայանն Պողոսյան /առաջին դասարանի աշակերտի ծնող/

ԾԱՆՐԱԿՇԻՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Կան շատ քննադատներ, այդ բովում նաև կրթությունը, որտեղ կատարված աշխատանքները գնահատվում են շարունակական, աստիճանաբար բարդացող ու խստացող մրցակցության արդյունքների հիման վրա: Տասնմեկ տարվա գերազանց առաջադիմությունը, 8-րդ դասարանի գերազանցության վկայականը, բոլոր առարկաներից ընթացիկ գերազանց առաջադիմությունը, հայոց լեզու և մարեմատիկա առարկաներից հանրապետական կենտրոնացած հանճանաժողովին գրավոր քննությունների գերազանց արդյունքները և այլն, անա այն դժվարագույն ճանապարհը, որը պարտավոր է հաղթահարել յուրաքանչյուր մեղալի հավակնորդ: Թերևս այդ դժվարություններով պետք է բացատրել, որ այս տարի հանրապետության 1440 դպրոցներից ընդամենը 134 աշակերտ բավարարեց մեղալի բոլոր պայմաններին: Հետաքրքիրն այն է, որ այդ դժվարություններից, ստուգումներից, փորձություններից, քննություններից հետո դեռևս չի ավարտվում մեղալակի դիմորդի ողիսականը. ԲՈՒՆ ընդունվելու համար դարձյալ քննություններ...



Ինչպիսիք է «Ավան կրթահամալիրը», շխախտելով նախորդ տարիների ավանդույթը 2001-02 ուսումնական տարին ավարտեց քաղաքական թարձր արդյունքներով: Նախ 31 շրջանավարտներից երկուսը Արևիկ Օհանյանը և Արման Մուրադյանը արժանացան մեղալի: Մեղալի հանճանում հատուկ արարողակարգ է սահմանված ՀՀ Կ և Գ նախարարության կողմից: Այդ հանդիսավոր արարողության ընթացքում նախարար պարոն Սկրտչյանը իր շնորհակալական խոսքում կարևորեց 21-րդ դարում բարձրորակ մասնագետների դերը, նրանց մեջ տեսնելով մեր մեղալակիներին:

Նախարարը ուշադրություն դարձրեց այն փաստին, որ հանրապետության յուրաքանչյուր 10-րդ դպրոցներից մեկին բաժին ընկել մեկ մեղալակի, իսկ «Ավան կրթահամալիրի» բաժինը ընդհանուր բժի շուրջ 1.5 % է կազմում: Նախարարի տեսադաշտից Վրիպեց նաև մեր կրթահամալիրի հաջողությունները, որը արտահայտվեց այսպես. «Այս կրթօջախը հայտնություն է ինձ համար...»:

ՎԱՐՄԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

ԷՋԵՐ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ

**Հովհաննես Շիրազ
Զրույց «Ոգնու» հետ (շարունակությունը)**

-Քո առաջին պատմությունը:
-Տպագրվեց առաջին գիրքս: Գնեցի կապույտ կոստյում և կանաչ փողկապ: Վազեցի խմբագրություն, դռան արանքից մի քանի անգամ գլուխս ներս մտցնելուց հետո վերջապես հրավիրվեցի. «Օհո», - հեզնեց խմբագիրը, - կանաչ փողկապ ես կապել, չե՞ս վախենում, որ ավանակը կուտի»: «Շատ կվախենամ, վրա տվի ես, - ըշտը իդոր համար վախվիսելով ներս կուզամ»:
-Ընթերցողներից շա՞տ նամակներ ես ստանում: Հատկապես ինչի՞ մասին են գրում:
-Մեկը վերջերս սփյուռքից գավազան էր ուղարկել, որ դրանով Մասիսը բարձրանամ:
-Որոշակի մարդկանց նկատի ունենում ես, երբ դահլիճներում կարդում ես «Մարգարիտն ու փրփուրը»:
-Իհարկե: Մարգարիտը ես եմ, փրփուրը՝ հակառակորդս:
-Դու գրել ես՝ «Առակի ուժը կարծության մեջ է, շունը առյուծի վրա կհաչե»: Իսկ ինչի՞ մեջ է պոեմի ուժը:
-Պոեմի ուժն էլ ինոր մեջ է, որ շունը հաչե, թե չհաչե, հեղինակի վեջը չէ:
-Ինչպիսի՞ն պիտի լինի պոեզիան:

-Մասիսի պես: Գեղեցիկ և ազդեցիկ:
-Տես՞ի ես, թե ինչպես են վաճառվում քո գրքերը:
-Ինչպե՞ս չէ: Մի անգամ «Քնար Հայաստանի» գրքիս համար մեծ հերթ էր: Միջակ մի բանաստեղծ, նախանձից դրդված ինձ հեզնելով, ասաց. «Տեսնու՞մ ես, հանրահայտ հոչակ»: Ես էլ, տակը չմնալով, պատասխանեցի. «Դու ինքդ տես, անտաղանդ գրչակ»: Հետագայում պարզվեց, որ այդ ընկերը «գրչակ» բառի իմաստը չգիտե: Տղաների մոտ պարծեցել է, թե «Շիրազն ինձ գրչակից անվանեց»:
-Իսկ դու ու՞մ ես գրչակից համարում:
-Ում ժողովուրդն է ծափահարում:
-Երբևէ զղջացե՞լ ես որևէ արարքի համար:
-Երեք բանաստեղծ ընկերներ հաճախակի էին ինձ այցելում: Մի անգամ ինձնից պարտքով փող վերցրին ու երկար ժամանակ չերևացին: Իսկ ես զղջալով ասացի. «Ի՞նչ արեցի, փող տալով՝ ընկերներ կորցրի»:
-Ի՞նչ կարծիքի ես... կանանց մասին:
-Երբ քահն էի, իմ հանդեպ Մասիսի լանջի ծաղիկ էին, հիմա... Մասիսի ծյուն են:
-Իսկ ի՞նչ կարծիքի ես «Ոգնու» մասին:
-Ուրախ եմ, որ իմ դեմ չի գրե... ուրեմն լավն է:

Արամ Գրիգորյան

Պատումներ Շիրազի կյանքից

Մի օր Հովհաննեսը, «մեծ մարդու» հնացած կոշիկներ հագած, մաշված վերնաշապիկով, բայց վզին մաքուր, կարմիր փողկապ, բերեց պատաստված թղթերի վրա գրված մի քանի բանաստեղծություններ:
-Խմբագիր ես դարձել: Տպի՛ր: Իմ բանաստեղծություններն են: Դե՛, տպի՛ր:
...Շաբաթներ էին անցնում: Թերթերը լույս էին տեսնում իրար ետևից, իսկ Հովհաննեսի բանաստեղծությունները մնում էին առանց տպագրության:
Տանը կարդալով նրա երգերը՝ զարմացել էի: «Կա՛մ Թումանյանից է թոքրել, կա՛մ Իսահակյանից»:
Սկսեցի քրքրել զանազան գրքեր: Թումանյան, Իսահակյան, Տերյան: Որոնա՞ս չգտա, բայց կասկածը մնաց կասկած:
Կրկին օրեր անցան:
Շիրազին հանդիպեցի մեր քաղաքի՝ Լենինականի Գորկա տանող ճանապարհին:
-Օո, ինչու՞ չես տպում:
Եկել էր ժամանակը: Որոշեցի բացելից ասել կասկածներս: Մանավանդ, որ չարացել էի. «Սրան նայի՛ր, մեծ բանաստեղծ է ձեռնում»: Նա կանգնած

էր հրավիրող հանդգնությամբ, մի տեսակ աքլորացած:
-Ինչու՞ չես տպում:
-Չեմ տպում: Լավ էլ ամում եմ: Դու չես գրել: Ուրիշինն է: Արտագրել ես: Գողացել ես:
-Գողացե՞լ...
Աշխարհը շուտ եկավ: Շիրազի դեմքին գույն չեր մնացել: Ճակատին քրտինքի կաթիլներ: Փոքր-ինչ ծովեցին շուրթերը:
Չգացի սխալս:
Կանգնած էի հանցանքի մեջ բռնվածի նման: Բայց նույն պահին էլ դեմքիս շառաչեց անսովոր մի ապտակ: Մինչև ուշքի գալիս, փախել էր:
Դրանից հետո, իհարկե, բանաստեղծությունները տպագրեցի: Այս անգամ եկավ բոքիկ ոտքերով, որ եթե հարկ լինի, ինձանից արագ վագի: Ֆիզիկապես ես նրանից ուժեղ էի: Բայց ի՞նչ ուժի մասին կարող էր խոսք լինել: Ես հոգեպես ջարդված էի... Ընկերս բանաստեղծ էր «էն զըլխից», իսկ ես կասկածել էի:

Զրույցներ Անդարանիկի մասին

Պատում եմ, որ երբ նորածին Անդրանիկին քահանան ուզում էր կնքել, հանկարծ լսվում է ծիու պայտերի դոփյուն: Ներս է գալիս մի մարդ, խլում մանկանը քահանայի ձեռքից, թաթախում սուրբ ջրի

մեջ, հետո նորից տալիս քահանային, և ինքն անհայտանում: Մարդիկ նկատում են, որ երեխայի մեջքին խաչ է դաջվել, և զլխի են ընկնում, որ դա սուրբ Գևորգն էր: Ասում են նաև, որ հետո, երբ Անդրանիկը կոփվ էր գնում, գնդակները չէին խոցում նրան: Ամեն անգամ կովից վերադառնալիս թափ էր տալիս շորերը, և զնդակները թափվում էին գետնին:

* * *

Ասում են, որ երբ Անդրանիկը իր զորքով շարժվում էր գաղթողների հետևից, հանկարծ ճանապարհի փոսի մեջ տեսնում է մի բարուրած երեխա: Վերցնում է երեխային, մոտենում գաղթողների առաջի խմբին.

-Ո՞վ է այս երեխային թողել,- հարցնում է նա:

Ոչ ոք չի ուզում հանձն առնել: Անդրանիկը դիմում է խորամանկության:

-Եթե երեխան մայր չունի, թրատեք,- հրամայում է վրդովված:

Դրանից սարսափահար՝ մի կին ճչում է:

-Վերցրու,- դառնացած ասում է Անդրանիկը,- եթե այս երեխան չլինի, վաղը ո՞վ պիտի մեր երկիրը պահի:

* * *

Անդրանիկը երեք ընկերների հետ կանգնում է Տաճկաստանի Սուլուխա կամրջի վրա: Մի թուրք ծիավոր է գալիս, որ անցնի: Անդրանիկը ծիավորի ճանապարհը կտրում է, ասում.

-Վերթաս քինբաշուն կասես, թե Անդրանիկը երեք հոգով կամրջի վրա կանգնել է և կոխվ է ուզում: Տղա մարդ է՝ թող գա: Եթե ասածս չանես, չես թողնի որևէ թուրք կամրջով անցնի:

Զիավորը Անդրանիկի ասածը հայտնում է քինբաշուն, սա էլ հեռագրում է սուլթանին: Սուլթանը պատասխանում է.

-Դու՛ ես հայի դահիճը, դու էլ գնա պատասխանի՛ր:


Քինբաշին հազար ծիավորով գալիս է Սուլուխա կամրջի մոտ: Նկատելով նրանց՝ Անդրանիկը ընկերներին թաքցնում է մոտակա բփերի մեջ, ինքը, երկու մաուզեր ձեռքին, թևերը մեջքին դրած, չըջում է: Քինբաշին ձին քշում, առաջ է գալիս: Անդրանիկն ասում է.

-Շա՛ն որդի, ե՛ն ժամանակ եկար, որ ձեռ ու ոտս կապած է: Տղամարդ էիր, ուրիշ ժամանակ գայիր:

Քինբաշին էլ որ լսում է, ձին թափով քշում է Անդրանիկի վրա: Անդրանիկը քաշում է մաուզերն ու թուրքի ճակատին շարում: Էն կողմից էլ տղաներն են սկսում մաուզերները շրխկացնել:

Դայտնում են սուլթանին, թե Անդրանիկ չառուջը քինբաշուն սպանեց: Սուլթանը ասում է.

-Էլ Անդրանիկը չառուջ չէ, սրանից հետո փաշա է: Եղ օրվանից Անդրանիկին «փաշա» են ասում:



Գրիգոր Նարեկացի «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակը

Ու քեպետ որպես մի մահկանացու՝ պիտի վախճանվեն, Բայց այս մատյանի հարակալությամբ կմնամ անմահ:

Գ. Նարեկացի

Ոչտունիքը բնության գողտրիկ վայրերից է՝ օժտված հազվագյուտ գեղեցիկ տեսարաններով, փարթամ և հարուստ բուսականությամբ, դալարագեղ հովիտներով, երփներանգ ծաղիկներով, վայրի թռչուններով, լեռնային պաղպաջուն աղբյուրներով: Այդ բոլորին փայլ ու գեղեցկություն է հաղորդում գեղածիծաղ Վանա ծովակը՝ շրջապատված բարձրագահ լեռնաշղթաներով:

Ավանդույթը պատմում է, որ Նարեկացին ունեցել է աղոթատեղի, որը գտնվում էր վանքից կես ժամաչափ հեռավորության վրա: Այն իրենից ներկայացնում է ժայռի մեջ եռահատակ փորված ինը քարայրերով մի շինվածք: Ուղղահայաց փորված են խորշեր, որոնք աստիճանների դեր են կատարում, որը աղոթատեղի տանող խիստ վտանգավոր ճանապարհն է: Այդտեղից երևում է Ոչտունյաց աշխարհը՝ իր ամբողջ շքեղությամբ: Իսկ այն քարայրից, որը Նարեկացու համար աղոթատեղի է ծառայել, դեպի ծովն է բացվում մի պատուհան, որտեղից երևում են Աղթամար և Առտեր կղզիները, իսկ հեռվում Լիմ և Կտուց անապատներն են: Բնական է, որ խորաթափանց գիտնականն ու նուրբ հոգի ունեցող արվեստագետը չէր կարող չտարվել բնության դյուբիչ պատկերներով: Ուստի ճիշտ է այն կարծիքը, որ Նարեկացու տաղանդը ոչ թե վանքում է ծաղկել, այլ բնության գրկում: Այնտեղ է սավառնել նրա միտքը, խորացել մարդկային խոհերն ու մտորումները: Այնտեղ է կերտել իր «Մատյան ողբերգության» պոեմը, որը պատկանում է մարդկային հանճարեղ այն ստեղծագործությունների թվին, որոնք միանգամից չեն ընթրնվում ժամանակի ընթացքում:

Եվ պատահական չէ, որ գրականագետ Խորեն Սարգսյանը գրել է. «Կարծես ամենագոր պահակ լինի, որ արթուն հսկում է միջնադարյան պոեզիայի յոթ դարի երկարությամբ տարածված զանձարանի ոսկի դոները»: Եվ արթուն գիշերներ էր անցկացնում՝ հայացքը հառած աստղազարդ երկնքին, զարմանում ևստծո ստեղծածով, զրուցում, վիճում արարչի հետ, համոզում ու համոզվում, վերլուծում ու մեկնաբանում. չէ՞ որ Աստված նրա համար կատարելություն էր ամեն ինչով: Նրան անհանգստացնում էր մարդը՝ իր հույզերով, մեղքերով, հավատով ու սպասումներով, ուրախություններով ու տառապանքներով, զգացմունքների ամենաբազմազան հակասություններով:

Ու գիշեր-ցերեկ՝ ուղիղ մեկ տարի, մեծ մարդասերը այդ ամենը հանձնում է թղթին՝ ավարտելով 1002 թվականին: Արդեն հազար տարի է, ինչ քայլում է մատյանը՝ դարձած «Նարեկ», դարձած հույս ու լույս հուսահատներին, տուն՝ տնանկներին, ճար՝ անճարներին, անհավատին՝ հավատ, անսերին՝ սեր: Այն սեղանի գիրք է դասագիրք, որ յուրաքանչյուրս ամեն պահ պետք է կարդանք ու հիշենք: Զանգի, ըստ Նարեկացու, մարդը մեծ մասամբ չի ցանկանում հասկանալ կյանքի ճշմարիտ իմաստը և ձեզգտում է այն փնտրել նյութականի մեջ, հաճույքների ու վայելքների մեջ, մտնում պայքարի մեջ, կատարում խարդախություններ ու կեղծիքներ՝ ապրելով ծանր ողբերգություն:

1000 տարի է անցել, բայց պոեմը իր թարմությամբ, արդիականությամբ մեզ ուսուցանում է, որ մարդը պետք է անկեղծ լինի ինքն իր հետ, սկսի «գործած մեղքերի» խոստովանությունից:

Մենք էլ ենք խոնարհվում մեծ իմաստասերի մտքի հանճարի առջև և նորից հիշում ամենայն հայոց բանաստեղծի խոսքը. «Թող լսեն և՛ երկինքը, և՛ երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայ

լեզուն չէ, որ խոսում է, քերանը չէ, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է՝ երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մոռնում է մինչև երկինք»:

Մեր առօրյան

ՀՆՉԵՑԻՆ ԴՅՈՒԹՈՂ ԵԼԵՎԷԶՆԵՐԸ

Դաշվետու համերգը սկսվեց «Մխիթար Գոշ» կրթահամալիրի հիմնով:

Չնայած դրսում ցուրտ էր, սառնամանիք, սակայն «Ավան» դպրոց-վարժարանի դահլիճից լսվում էին երաժշտության մեղմ հնչյուններ: Վարժարանի երգչախումբն էր, որ կատարում էր հիմնը՝ «Գարուններդ», և «Ո՛վ հայոց աշխարհ» երգը, իսկ Հիսուսին նվիրված երգը ջերմեռանդությամբ լցրեց հանդիսատեսի սիրտը՝ կարծես նախապատրաստելով աղոթքի: Հետո հնչեց «Հայրապետական մաղթանքը» երգը՝ ըստ Կոմիտասի: Երեխաները երգում էին զգացմունքով, հավատով, մեղմությամբ, հետո լսվում էր հաղթական ու հնչեղ տոնը:

Ահա դաշնամուրի մոտ է 2-րդ դասարանի աշակերտուհի Մարիամը, որի նուրբ մանկական թաթկները վարժ սահում են ստեղծների վրայով, իսկ փոքրիկ Հռիփսիմի դաշնամուրային նվագը արևի ջերմ շողերով լցրեց և ջերմացրեց դահլիճը: Վերջին երգը ծնված էր գիտությանը, կրթությանը, իմաստությանը, այն կարծես մի յուրօրինակ աղոթք էր, հաղթական կոչ՝ ուղղված կրթության նվիրյալներին: Նրա ելևէջները բարձրացան, սփռվեցին դահլիճում, ալեկոծեցին ու փոթորեցին ունկնդիրների հոգիները, հետո տարածվեցին վարժարանի շրջակայքում և պարուրեցին ցրտաշունչ օդը. մի պահ անցորդները զարմացած կանգ առան՝ ըմբռնվեցին փողոցում հայտնված երաժշտության հնչյունները, հետո ամեն ինչ ի մի հավաքվեց, աստիճանաբար ու մեղմասահ մարեց

«Ավան» դպրոց-վարժարանի դահլիճի կամարների ներքո:

Ահա հնչում է «Կիլիկիա» երգը: Մի պահ մոռանում ենք, թե որտեղ ենք, կարոտը սահման չունի, անափ է, անեզր: Իսկ «Հայրենյաց երգը» հնչեցրին խրոխտ, անվարան, որ հայոց երկիրը ոչ մեկին չեն տա, այն փարված է նրանց կրծքին, ինչպես մի նոր սիրտ ու սրտի տրոփյուն, ինչպես սիրառատ մայր: Հայրենական երգերի շարքը մեկ անգամ ևս պատգամ էր՝ հայրենիքը հայ պահելու, հային իր հողին ու ջրին կապելու կոչ: Զէ՛ որ այդ փոքրիկների համար Հայաստանը ամրոց է, բերդ, և ոչ ոք այն չի կարող խլել, քանի դեռ նրանց շուրթերին հնչում է այդ երգը:

Վերջում Սևակը կատարում է գուսան Հահենի «Հայերեն» երգը: Չայնակցում էին բուրբը, երգում, արտահայտում իրենց անմնացորդ ու նվիրական սերը հայոց լեզվի, մայրենիի նկատմամբ:

Այո՛, երաժշտության ուսուցչուհի Լիանա Տիգրանյանի նվիրյալ աշխատանքը տվեց իր պտուղները: Ըն՛ որ երգի միջոցով վարժարանի սաները հաղթահարում են շատ դժվարություններ, քայլում հայոց պատմության դարավոր էջերում, քաղում իրենց համար անհրաժեշտ գիտելիքներ՝ հպարտանալով հայրենական պատմության հաղթական նվաճումներով:

*Թ. Դարագյոզյան
Հ. լ. և գր. ըսուցչուհի:*

Ավանդույթ, որ կշարունակվի

«Ավան» դպրոց-վարժարանում հիմք դրվեց մի գեղեցիկ ավանդույթի: Արուսյակ Օհանյանի անմիջական նախաձեռնությամբ ու ստեղծագործական ներշնչմամբ վարժարանի չորրորդից տասներորդ դասարանների աշակերտները իրենց գրական առաջին փորձերը հանձնեցին թղթին՝ ստեղծագործելով տարբեր գրական ժանրերում՝ բանաստեղծություն, հանելուկ, պատմվածք, մանրապատում, ակնարկ ու մտորումներ: Նախօրոք Արուսյակը մոտենում էր յուրաքանչյուրին, խորհուրդներ տալիս, թափանցում նրանց հոգեբանական աշխարհը և ստեղծագործական հեքն ու ներշնչանքը դնում ճիշտ ուղու վրա. չէ՛ որ Արուսյակ Օհանյանը ինքն էլ է ստեղծագործում, գիտի այդ դժվարին ուղու բարդությունները: Նա այնպես էր ոգեշնչել պատանի ստեղծագործողներին, որ մարտի 18-ին՝ ժամը 15.00-ին, սկսվեց գրական միջոցառումը: Դաշնամուրի մոտ էր Աննա Բուդաղյանը: Երաժշտության մեղմ հնչյունների ներքո թեմ են բարձրանում չորրորդ դասարանցիները՝ Դիանան,

Լիլիթը, Ալվինան, Տաթևիկը, Սովսեսը, Արմենը, և կարդում իրենց ստեղծագործությունները: Հետո ընթերցում են վեցերորդ դասարանցիներ Անին ու Նարինեն: Իսկ իններորդ դասարանցիներ Արմինեն, Արտյոմը և Մարիամը ուղղակի մի նոր թարմության շունչ հաղորդեցին միջոցառմանը: Բայց սպասե՛ք, ահա և տասներորդիցիները: Անվարան ու հաստատուն քայլերով թեմ են բարձրանում Նարինեն և Աննան: Մեկը ասումնք, մյուսը՝ մտորումներ: Աննա Սանամյանը գրել է մտորումներ «Իմ մաքրաթև երազներ» թեմայով: Նրա և՛ ընթերցանությունը, և՛ թեմայի բովանդակությունը եթերային շունչ հաղորդեցին ունկնդիրներին: Եվ այսպես միջոցառման հաղթող ճանաչվեց Աննա Սանամյանը: Արուսյակ Օհանյանը յուրաքանչյուրի համար փոքրիկ հուշանվեր է պատրաստել՝ գիրք, ծննդյան քալիսմաններ և այլ նվերներ:

Ուզում ենք երախտիքի խոսք ուղղել Արուսյակին, որ այդքան քնքուշ ու նուրբ միջոցառում էր կազմա-

Իմ մաքրաթև երազներ

Իջե՛ք, իջե՛ք, երազներ,
Իջե՛ք, մաքուր երազներ
Իջե՛ք, քնքուշ երազներ:

Լ. Շանթ

Առանց երազների աշխարհը ցուրտ է ու տխուր: Առանց երազների աշխարհը պարզապես շուտ կգա, որովհետև երազն է այն կենարար ավիչը, որից ջերմանում են մարդկանց սրտերը: Երազն օգնում է ապրել, թռիչքի թևեր է տալիս մեր հոգիներին: Երազն ազնվացնում է, սովորեցնում կարոտել ու սպասել:



--Կարոտե՛լ: Ու՛մ: Ի՞նչի՞ համար:

__Սպասե՛լ: Գուցե նաև՝ անրջե՛լ:

__Դե, մի՞թե չեք հոգնում մանկական այս խաղերից.-- հաճախ եմ լսում անվերջ կարոտից ու զուր սպասումից հոգնած մարդկանց տրտունջը:

Շանր է, անշուշտ, երբ փշրվում են երազները, սակայն չի կարելի թույլ տալ, որ նրանք մեռնեն: Մեր երազները մեր հույսերն են, ապրելու մեր տենչը, մեր իղծերն ու ամուրքները: Մեր երազները մեր աշխարհն են այս մեծ աշխարհում, մեր հոգու թռիչքը, մեր արյան կանչը:

Ես սիրում եմ ձեզ, իմ մաքրաթև՝ երազներ: Ձեր մեջ իմ էությունն է, ապագայի վառվուռն հույսը: Ես սիրում եմ ժամերով ունկնդրել ձեր հոգեթով մեղեդին, ավազի վրա շուշանաթույր ծաղիկներ նկարել ու երկնառաք ամրոցներ կառուցել: Սիրում եմ մտովի զրուցել ինքս ինձ հետ: Իմ երազների ոսկեավազ անապատում ես եմ միահեծան տերը: Այնտեղ ամեն ինչ իմ ճաշակով է, ամեն ինչ ինձ համար է և ինձ է սպասում: Ոչինչ, որ անապատում այրում է արևը, և շուրջը միայն ավազ է ու ավազ... Ես կհասնեմ լուսեղեն հե-

ռուները, իմ երազի թևով շատրվաններ կհանեմ երկրի ընդերքից: Ես կմեղմեմ նաև իմ շուրջը եղած ժայռեղեն մռայլը և աշխարհին ու մարդկանց կպատմեմ իմ կանաչ հեքիաթը: Թող մարդիկ լսեն, թող իմանան, որ սերն ամենազոր է: Նա, ով սրտում մաքրաթև երազներ է փայփայում, չի կարող տրվել մանր ու ճղճիմ կրքերի... Ուրեմն, պահեք-պահպանեք ձեր երազները, ձեր սերը, աշխարհի՛ մարդիկ: Դեռու՛ վանեք ձեզանից նախանձի որդն ու չարության թույնը, մի՛ թողեք, որ ընչաքաղցությունն ու խարդավանքը համաճարակի պես տարածվեն ձեր շուրջը, մի՛ հրապուրվեք վաղանցիկ վայելքներով: Ձեր երազները հյուսե՛ք բարի կամքի ու աստվածահաճ սիրո թելերից, համեմե՛ք այն մեծահոգությամբ ու բարեսրտությամբ, անձնազոհությամբ ու խանդավառությամբ ու ցողե՛ք անմեղությամբ:

Օգնե՛ք, որ իրական գույներ ու երանգ ստանան նրանք, և դուք երջանկության համը կզգաք ձեր բերանում:

Այնժամ կյանքն էլ կդառնա մի լուսեղեն հեքիաթ, երկիրն ու երկինքը կհաշտվեն միմյանց հետ, և երջանկությունը յոթներանգ կօխածանվի: Մարդիկ թեթևացած շունչ կբաշեն, անձրևի կփոխվեն մռայլ թուխակները, արտերը կծփան ոսկուց, գետերը ուրախությունից կխենթանան և լույս կարարեն: Եվ եղիցի՛ լույս իմ բազմաչարչար հայրենիքում, եղիցի՛ սեր ու միասնություն:

Ես նորից տրվեցի իմ երազներին, նրանք նորից սկսեցին փոթորկել հոգիս: Իմ մաքրաթև երազները՝ դեռևս ամպոտ, թույլ ու մտացածին, բայց լուսեղեն, բայց ծյունաթույր, բայց կրակոտ...

Ես սիրում եմ ձեզ, իմ մաքրաթև՝ երազներ:

Սանամյան Աննա
10-րդ դասարան

Օր, որ բոլոր սիրահարների սրտովն է

Ըստ ավանդության՝ Վալենտինը քրիստոնեություն էր տարածում Հռոմում: Նա գաղտնի, քրիստոնեական ծեսով ամուսնացնում էր սիրող զույգերին, բուժում հիվանդներին, օգնում կարիքավորներին: Ասում են՝ իր գործունեության ընթացքում Վալենտինը բուժում է մի կույր աղջկա և սիրահարվում նրան...

Քրիստոնեություն տարածողներից այս հալածյալը նույնպես մահվան է դատապարտվում և փետրվարի 14-ին՝ գլխատվում: Մահապատժից առաջ նա նամակ է գրում իր սիրեցյալին ստորագրելով քո Վալենտին: Այդ ռոմանտիկ սիրո պատմությունը ծնեց մի գեղեցիկ ավանդույթ՝ սիրելիին սիրո խոստովանություն անել, բայց և անհայտ մնալ: Վանկացողներն սկսեցին այդ օրը նամակներ գրել նրանց, ում սիրում են, և ստորագրել՝ քո Վալենտին կամ քո Վալենտինա...

Եվրոպայում և Ամերիկայում սբ. Վալենտինի օրը՝ փետրվարի 14-ը, «Սրտի օր» անունն է կրում: Դա անանուն կամ բացահայտ սիրո խոստովանությունների, սիրելիներին նվերներ մատուցելու, մի խոսքով՝ սիրահարների օր է, որը հատկապես դպրոցական բարձր տարիքի և ուսանողների սիրած տոներից մեկն է:

Եվ այդ օրը՝ փետրվարի 14-ին, «Ավան» դպրոցվարժարանում եռուգեռ էր: Նորից տիկին Ասլանյանն է խառնվել իրար, նորից միջոցառում՝ այս անգամ նվիրված սիրահարների օրվան: Դահլիճը լեվի-լցեցուն է: Դնչում է մեղմ ու քնարական երաժշտությունը, որի հնչյունների ներքո բեմ են բարձրանում տասներորդ դասարանցիներ Լուսեն և Վլադիմիրը, մեկը՝ Ջուլիետա, իսկ մյուսը՝ Ռոմեո: Լուսե-Ջուլիետան այնքան գեղեցիկ է ու եթերային իր մետաքսե թեթև զգեստի

մեջ, որ նույնիսկ դահլիճից զմայլանքի շշուկներ են լսվում: Երկու սիրահար սրտերի երկխոսությունը սրտեր է հուզում: Հանդիսատեսը շունչը պահած հետևում է, որսում ամեն մի հնչյունն ու բառը, մոռանում, թե որտե՞ղ է՝ թատրոնում, թե՛... որովհետև Ջուլիետա-Լուենեն կատարյալ էր մտել իր դերի մեջ, իսկ Ռոմեո-Վլադիմիրը նրան էր նայում իր սիրակարոտ հայացքով:

Քիչ անց նորից է հնչում երաժշտությունը, բայց այս անգամ տազնապացունց, անհանգիստ. մտնում է թիրոս ու դաժան ուժը: Նրան անհասկանալի է սիրո



հուրն ու կարոտը, սիրո հմայքն ու սպասումը, նա եկել է դաժանորեն կործանելու այն, նա եկել է սպանելու սերը... Յոթերորդ դասարանի աշակերտները լավ էին մտել իրենց դերի մեջ:

Հետո բեմ են բարձրանում իններորդ դասարանի աշակերտներ Մարիամը և Սիերը: Մարիամի սիրո թախանձանքներն ու աղաչանքներն անպատասխան են մնում Սիերի կողմից: Աղջիկը խնդրում է, պաղատում, սիրո բացատրություն տալիս, բայց իզու՞ր. տղան ան-

դրովելի է, չի ընդունում աղքատ սերը: Մարիամի և Սիերի կատակ-սիրախաղը շատ ծափողջույններ պոկեց հանդիսատեսից:

Իսկ 10-րդ դասարանցի Քրիստինեն և 9-րդ դասարանցի Արմենը, որ 3-րդ զույգն էին, ներկայացան իրենց հորինած սցենարով ու պարով, սիրո կատակներով ու խաղերով: Բայց դեռ պայքարը շարունակվում է:

Երրորդ փուլին զույգերը պետք է ներկայացնեին համաշխարհային սիրահար զույգերին: Իրար հետևից հնչում էին՝ Արա Գեղեցիկ և Շամիրամ, Մուսան և Սեյրան, Անուշ և Սարո, Սոս և Վարդիթեր, Ռոմեո և Ջուլիետա, Աննա Կարենինա և Վոդնևիկ, Նապոլեոն և ժոզեֆինա, իսկ վերջու՞մ... երկրորդ զույգի ասպետ Արմենը արտասանեց՝ Տեր և Տիկին Օհանյաններ... Ուրախությունը, ցնծությունը տարածվեց դահլիճով մեկ: Սիրո արահետով քայլողներին գերող ու ճկուն պարով ողջունեց 2-րդ դասարանի Թերեզան:

Միջոցառման կազմակերպիչ տիկին Ասլանյանը բեմ է հրավիրում հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի տիկին Դարազյոզյանին: Նա ներկայացնում է սիրո գեղեցկությունն ու նրա հմայիչ ուժը, ջերմությունն ու բարերար ներգործությունը մարդու բարոյահոգեբանական դաստիարակության վրա: Հետո նա ամուսնեց սիրո գողտրիկ բանաստեղծություն՝ նաև լրացնելով, որ «Ավան» դպրոց-վարժարանը ազգային նվիրումի ու սիրո ծնունդ է, և սիրո տոները միշտ կշարունակվեն:

*Մարինե Դարբինյան
9-րդ դասարան*

ՄԱՐԴՈՒՆ ԲՆՈՐՈՇՈՂ ԹԵՍԵՐ

Արյան խումբն ու... բնավորությունը

Փարիզցի հոգեբան ժան-Բատիստա Դելակորի կարծիքով արյան խումբն ազդում է նաև բնավորության հիմնական գծերի վրա:

Ա խումբը. բարեխիղճ ու ջանասեր մարդիկ են: Խնամքով են կատարում իրենց պարտականությունները: Նրանց համարձակորեն կարելի է անվանել կատարյալ մարդիկ: Մեծ առաջընթաց ունեն գործնական կյանքում, հավատարիմ են ընկերներին, սիրելիներին, հարազատներին: Գիտնականները գտնում են որ այս խմբի մարդիկ ավելի ինտելիգենտ են, քան մյուսները:

Բ խումբը. զգացմունքային են, շատ նրբազգաց, օժտված մարդկային բոլոր հատկանիշներով, վստահելի կոլեգաներ են և ընկերներ: Աշխատանքում պահանջկոտ են թե՛ իրենց և թե՛ ուրիշների նկատմամբ: Արտաքին հանգստության քողի տակ թաքնված է զգայուն և փխրուն հոգի: Սիրո մեջ նրանց զգացմունքները բուռն են ու անսանձելի: Բ խմբի կանայք ավելի խանդոտ են, քան տղամարդիկ:

ԱԲ խումբը. «Ձգացմունքին ազատորեն տրված բնավորություն», հակիրճ այսպես է բնութագրել Բարտոլոմեոսը: Երանց հոգում են ուժեղ և անհոգ

րոնք երբեմն դառնում են հոգեկան խռովքի և տանջալից ապրումների պատճառ: Այդ ողջ փոթորիկը նրանք ապրում են մենակ ոչ ոքի չվստահելով իրենց զաղտնիքները: Այդ է ապացուցել նաև Յուրի-Խի համալսարանի պրոֆեսոր Անգոտը վերլուծելով հատուկ տեստերի 3000 պատասխան:

Սիրո և ընկերության մեջ, ինչպես նաև ընտանիքում, նրանք ձգտում են իդեալականին, նշում է Դելակորը. ձգտելով երջանկության երջանկացնում են նաև իրենց ընտրյալին»:

Օ խումբը. մարդիկ, որոնց վիճակված է լինել անընդհատ շարժման մեջ: Նրանք եռանդուն են, մարդամոտ, օժտված հզոր կամքով: Աշխատում են համառորեն, առանց հոգնելու և ունակ են կարճ ժամանակում երեք անգամ ավել աշխատել մնացածից: Տոկիոյի արյան բանկի մասնագետները բավական զուսպ են արտահայտվում «արյան բախտացույցի» մասին: Նրանք գոհ լինելու շատ հիմքեր ունեն: Ամենայն հավանականությամբ հենց այդ բախտացույցներն են նպաստել, որպեսզի երիտասարդների մեջ գնալով ավելանա դոնորների թիվը:

Արդյոք սրամիտ եք դուք

Առաջարկված հարցերին պատասխանել այդ կամ ոչ:

1. Երբ ձեզ համառորեն գիրք են առաջարկում, դուք կարո՞ղ եք մերժել այնպես, որ տվյալ մարդը չվիրավորվի:
2. Բեմի վրա անհարմա՞ր եք զգում :
3. Երբ բարկանում են ձեզ վրա, դուք կորցնո՞ւմ եք ձեզ:
4. Երբ հեռուստատեսությամբ դիտում եք վիկտորինա, պատասխանո՞ւմ եք բոլոր հարցերին:
5. Բացատրո՞ւմ եք այն մեխանիզմի մասին, որից գլուխ չեք հանում:
6. Բարկանո՞ւմ եք դուք, երբ ձեզ մեկը վիրավորում է, իսկ դուք չեք կարողանում պատասխանել:
7. Չիմացած բառը գտնելիս ձեզ հարկավո՞ր է հանրազիտարան:
8. Դուք կարծում եք, որ հարկավոր է պատասխանել յուրաքանչյուր հարցին, քան լռել:
9. Դուք նկատում եք, որ ձեզ սխալ են մանրը վերադարձրել: Դրա պատճառով աղմուկ բարձրացնո՞ւմ եք:
10. Քննության ժամանակ, դուք կարդում եք թերթիկից, ոչ թե խոսում բանավոր:
11. Դուք շախմատ լա՞վ եք խաղում:
12. Վերջին խոսքը ձե՞րն է:

Բանալի-Այն «այո» պատասխանների դիմաց դնել 1 միավոր, որոնք համընկնում են 1,4,5,8,9,10,12, «ոչ»

2,3,6,7,11: Արդյունքները գումարեք:

Պատասխանները - 8-ից բարձր

Դուք շուտ պատասխանում եք բոլոր հարցերին: Ունեք ուժեղ բնավորություն: Չեք սիրում ոչ մի դեպքում լսել, բայց միայն շատ ինքնավստահ եք:

4-ից բարձր

Դուք չեք սիրում խոսել հիմարությունների մասին, միշտ համոզված եք ձեր խոսքի վրա: Դա խելքի և սրամտության նշան է, և ձեզ կարելի է շնորհավորել:

մինչև 4 միավոր

Դուք երևի ամաչկոտ եք և համոզված չեք ձեզ վրա, բայց դա անցողիկ է:

Յույց տուր շրթներկդ, ասեմ ով ես դու

Ուշադիր ուսումնասիրեք ձեր սիրած շրթներկը բոլոր կողմերից և կհանդգնեք, որ այն, բացի ձեր շուրթերի ձևը բացահայտելուց /նայած ինչպես եք օգտագործում/, բացահայտում է նաև ձեր բնավորությունն ու խառնվածքը: Դա զվարճալի խաղ է, բայց և վտանգավոր, քանի որ բացահայտվում են շատ գաղտնիքներ...

Կլորացված շրթներկ. Շրթներկի այդ ձևը ցույց է տալիս, որ դուք անփորձ եք նկարչության արվեստում, բայց քաղցրասեր եք և շատ զգայուն:

Մատիտի պես սրածայր շրթներկը վկայում է, որ դուք ձգված եք և ճշտապահ բոլոր տեսակի հարաբերություններում: Իսկ կատարելության ձգտող կանանց շրթներկը տափակ է երկու կողմերից, անգամ վերջանալիս այնպիսի տեսք ունի, կարծես չի օգտագործվել:

Անուշադիր, անփույթ կնոջ շրթներկը լրիվ բութ է, առանց անհատականության: Այդպիսի կանայք շրթներկ օգտագործում են թափով, ուղիղ անկյան տակ, առանձնապես չմտածելով: Այդ թերությունը խոսում է գործողությունների մեջ շտապողականության մասին:

Ջանասեր կանայք ունեն սուր և երկու կողմից տափակած շրթներկ, որը օգտագործելիս խնամքով անց են կացնում շուրթերի արանքով: Այդ կանայք աշխատասեր են, ուշադիր և լուրջ:

Սիրո քիմիան

Սերը և հիպոֆիզը


Սիրո էֆորիկ զգացումը ծնվել է ոչ թե սրտում, այլ հիպոֆիզում: Այդտեղ են առաջանում սիրո զգացումը ղեկավարող բոլոր հորմոնները և բոլոր նյարդաթելերը: Ուստի այդ օրգանի վնասվելու դեպքում խանգարվում են նյարդային ուղիները և սիրային կապերի վերահսկվող հորմոնների արտազատումը դադարում է: Օրինակ, վաղ հասակում այն անծիքը, որոնք տարել են /հիպոֆիզի/ ուռուցքի հեռացման վիրահատություն, կարող են երբեք չսիրահարվել և չիմանալ ինչ է սերը:

Դեղատոմս կոտրված սրտերի համար

Շոկոլադը պարունակում է քիմիական ֆենիլետիլամին նյութ: Այսօրինակ նյութ արտազատում է ուղեղը, երբ մարդիկ սիրահարվում են: Նյութը ուժեղացնում է սրտխփոցները, բարձրացնում օրգանիզմի տոնուսը և առաջացնում երջանկության զգացողություն:

Դետազոտություններն ապացուցում են, որ երբ սիրած մարդիկ բաժանվում են, հաճախ են ունենում շոկոլադ ուտելու մեծ ցանկություն:

ԽԱՉՔԱՌԵՐ



Ուղղահայաց

1. Պատմիչ, «Վարք Մաշտոցի» աշխատության հեղինակ: 2. Սննդի և ժողովրդական բժշկության մեջ լայնորեն օգտագործվող բուսատեսակ: 3. Ա. Շիրակացու հայտնի աշխատությունը: 5. Հնագույն ձեռագրերի գրապահոց երևանում: 6. Ժամանակակից հայ անվանի կոմպոզիտոր: 9. Հայ բեմի ճանաչված վարպետ: 10. Հին հայկական տառատեսակ-գրելաձև: 12. Նահանգների կառավարիչ էին Հայաստանում: 13. Գավառ միջնադարյան Հայաստանում: 16. Հայ նկարիչ: 17. Համանուն քաղաք և հարթավայր պատմական Հայաստանում: 18. Հայերեն լեզվով առաջին մարքսիստական անլեզալ թերթը: 22. Հայկական միջնադարյան մշակույթին բնորոշ կոթող-հուշարձան: 23. 1980-90-ական թվականներին արտադրական խոշոր միավորում երևանում:


Հորիզոնական

4. Ա. Դանալանյանի աշխատությունը, որտեղ հավաքված ու հետազոտված են հայկական հնագույն ավանդությունները: 7. Գ. Նարեկացու հայտնի պոեմը: 8. Եվրոպական քաղաք, որը 17-18-րդ դարերում հանդիսանում էր հայ տպագրական գործի կենտրոնը: 11. Արևմտահայ նշանավոր կին գրող: 13. Խորհրդահայ երաժշտագետ, կոմպոզիտոր: 14. Հայաստանի տարածքում առատորեն հանդիպող խոտատեսակ: 15. Հայ ճարտարապետական արվեստի գոհարներից: 19. Փամբակի լեռնաշղթայի գագաթներից: 20. Ժողովրդական պար: 21. Լայն ճանաչման արժանացած գեղարվեստական կինոնկար: 22. Քրիստոնեական տաճարում Ավագ սեղանի տեղը: 24. Հայ անվանի դաշնակահարուհի: 25. Մայրաքաղաք պատմական Հայաստանում:



ՅՈՒՐԻՉՈՆԱԿԱՆ 1....-Բարբարա: 6.«Դեկորատիվ» շնատեսակ: 7.Հայ բանաստեղծ /«Բիրլիական»/: 9.Բանտ, խավար, մեկուսարան: 11.Գետ Հայաստանի հյուսիսային մասում: 12.Գերմանացի կոմպոզիտոր /«Թռչող հուլանդացին»/: 16. Կրոնական ծեսերի ժամանակ օգտագործվող խեժ: 18. Հայ երգահան: 19.Ուղի մաս: 20.Միջնադարում քաղուհի ֆրանսիայում: 21.Նկարների ժողովածու: 24.Հողագործական աշխատանքի արդյունքը: 25.Չինվորական կոչում: 26.Վիճակ, դրություն: 29.Ոչինչ չպարունակող: 32.Փոքրիկ գավաթ: 33.Հարված ձեռքի ավիոլ: 34.Երգի-ծանր: 35.Հիացական բացականչություն: 36.19դ. գերմանացի բանաստեղծ, քննադատ:

ՈՒՂՂԱՅԱՅԱՑ 2.Մարդկային կազմվածքի ձևով սյուներ: 3.Ազաի պառավի կտրված ունեցվածքը /«Ոսկե ձկնիկը»/: 4.Ամիս: 5.Ֆուտբոլի խաղադաշտի՝ զնդակի համար դժվարամատչելի հատված: 8.Հնդիկ կինոռեժիսոր, դերասան /«Պարոն 420»/: 10. «խորհրդային» հեծանիվ: 13.Երկնային մարմին: 14. Գարեջրի տեսակ: 15.Աղմկարար թռչուն: 17. Օրգանիզմի վիճակը ծնունդից մինչև մահ: 19. Կոնի գագաթը հիմքի շրջանագծին միացնող հատվածը: 22. Կահույքի մաս: 23.Միջինասիական ոչխար: 27.Նշում, նոթագրում: 28. Երաժշտական հնչյունաշարի հատված: 30.Հին հունական քաղաք-պետություն: 31.Մետաղագործ:



ՅՈՒՐԻՉՈՆԱԿԱՆ 3.Հունական այբուբենի 3-րդ տառը: 8.Փողային երաժշտական գործիք: 9.Կամարածն տանիք: 10.Ծածկի ներսի մասը: 11. Հրոսակախումբ: 13.Երկրաչափական մարմինը բնութագրող հատկանիշ: 14.Ծոմ, պաս: 16.Ձրասույզ լինել: 18.Թմրանյութ: 21.Ուտնաման: 24. Հանդիսապար: 25.Առանց մնացորդի 2-ի չբաժանվող թիվ: 26. Թանապուր: 28.Չմոսած դիակ: 30.Հայտնի, նախկինում հանդիպած: 32.Կապիտալից, հողից ստացվող կանոնավոր եկամուտ: 34. Որևէ աշխատանքի համար անհրաժեշտ գործիք: 36. Հստակ, մաքուր: 37.Իտալացի կինոռեժիսոր, դերասան /«Ես գիտեմ, որ դու գիտես, որ ես գիտեմ»/: 39.Ոսկու կշռի միավոր: 41.Ափյուռքահայ նշանավոր երգիչ: Սենյակային բույս: 43.Նորգելանդական կարագ: 44.Ֆրանսիական հռչակավոր օձանելիք:

ՈՒՂՂԱՅԱՅԱՑ 1.Քաղաք Իտալիայում: 2.Երևանի հին քաղամասերից: 4.Գործողություն, վարմունք: 5. Սպիտակամորթների և հնդկացիների խառնածին: 6. Եվրոպան Ասիայից բաժանող զետ Ռուսաստանում: 7.Իտալական ավտոմեքենայի մակնիշ: 12.Մաստիկ զարմանալ: 13. Աննկատ փախել: 15.Ամիս: 17.Հին եգիպտական քաղուհի: 18.Անսպասելիորեն: 19.Պետության կողմից տրվող պատվանշան: 20.Չավակի մայրը կնքահոր կամ կնքամոր համար: 22.Թույլ ալկոհոլային խմիչք: 23.Կղզի, Նապոլեոնի ծննդավայրը: 27.Ամերիկյան կինոկատակերգություն: 29.Ֆրանսահայ նկարիչ /«Ալ սենյակ»/: 31.Չեռքով հացահատիկ աղալու մեքենա: 33.Երկկենցաղ կենդանի՝ սալամանդրների ընտանքից: 35. Պետություն Աֆրիկայում: Ուազի ոչխարները մորթողներից: 38.Ավազային բլրակ անապատում: 40.Չար, խարդախ բնավորություն ունեցող:

